ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 մարտի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

30
(3061)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԵՐԻ» ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՐՑՈՒՄ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՄՆԱ ՄԻԱՅՆԱԿ

ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը, որ մտադիր է տարբերվել արդարադատության նախկին նախարար Ռուստամ Բադասյանից եւ պայքար մղել քրեական ենթամշակույթի դեմ, ձախողվելու է ավելի խայտառակ ձեւով, քանի որ մի խումբ փաստաբաններ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասացին, որ նախարար Սարգսյանը, եթե իր մտադրությունը փորձի օրենքի ուժով ամրագրել, հակասահմանադրական որոշում է ստանալու:

Ինչպե՞ս՝ մանրամասնենք փաստարկներով. նախ պետք է իրավապահները տան բացատրություն եւ ներկայացնեն հիմքեր, թե ինչ է նշանակում քրեական աստիճանակարգում կարգավիճակ ունենալը կամ այսպես ասած՝ «օրենքով գողը», որի համար նախարարը պահանջում է պատժել քաղաքացուն: Պատկերացնենք մի իրավիճակ. իրավապահ մարմնի աշխատակիցը քաղաքացուն հարցնում է՝ դուք «օրենքով գո՞ղ» եք, քաղաքացին պատասխանում է՝ ոչ, եւ հակադարձում՝ գողն էլ, ավազակն էլ, դուք եք: Ի՞նչ է անելու իրավապահ աշխատակիցը. անհասկանալի է: Կամ եթե հարցնի՝ քրեական աստիճանակարգում ի՞նչ կարգավիճակ ունեք, քաղաքացին պատասխանելու է՝ չունեմ որեւէ կարգավիճակ: Ի՞նչ է անելու իրավապահը. պարզ չէ:

Կարճ ասած, Արփինե Սարգսյանի՝ փետրվարի 12-ի հայտարարությունը մոտավորապես նշանակում է, որ մարդուն հարցնելու են անունը, եթե պատասխանեց, թե ինչ է անունը, ուրեմն պետք է պատժվի: Սա ոչ այլ ինչ է, քան խտրական վերաբերմունք, քանի որ մարդուն պատժում են իր արարքների համար, այլ ոչ թե ոչինչ չանելու, միայն ապրելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հենց իշխանության ներսում ՆԳ նախարարի այս նոր գաղափարը լուրջ դիմադրության է արժանանում, եւ դժվար թե կարողանան անցկացնել, քանի որ ակնհայտորեն սահմանադրությանը հակասող սկզբունքներով է կառուցված Սարգսյանի կողմից ներկայացրած օրենքը:

Մեզ մնում է սպասել զարգացումներին:

ՄԻԵԴ-ում Հայաստանի Կառավարության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի ազատման 5-րդ դիմումը Նիկոլ Փաշինյանն ի վերջո նախօրեին ստորագրել է: «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Փաշինյան-Կիրակոսյան հակամարտությունը խոր արմատներ ունի: Կիրակոսյանը ամեն բան անում է, որպեսզի միջազգային ատյաններում քննվեն հայ ռազմագերիների, Արցախում տեղի ունեցած հանցանքների դեպքերը, իսկ Փաշինյանը հորդորում է «հետ քայլ անել» քանի որ այդպես է ուզում Ադրբեջանը: Մեր աղբյուրները նշում են նաեւ, որ Կիրակոսյանը վրդովված ու նեղացած է այն բանից, որ Փաշինյանը իրեն խոստացել էր նշանակել ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնում ու հանկարծակի ՔՊ վարչության նիստում մտափոխվել ու նախարար է նշանակել Սրբուհի Գալյանին: Ինչո՞ւ, որովհետեւ Կիրակոսյանն իր խոսքում ՔՊ վարչության նիստի ժամանակ հայտարարել է, թե պետք է Հայաստանն իր հայցերից հետ չկանգնի եւ, որպես նախարարի թեկնածու, ասել է, որ պետք է առաջ տանի այդ գործերը: Հիշեցնենք, որ դեռեւս հոկտեմբերի 29-ի ՔՊ վարչության նիստի ժամանակ անակնկալ որոշվել էր Գրիգոր Մինասյանի փոխարեն այդ պաշտոնում նշանակել Սրբուհի Գալյանին, որից հետ Կիրակոսյանը հրաժարականի դիմում էր ներկայացրել, իսկ Փաշինյանն այն չէր ստորագրել: Հիմա Կիրակոսյանը, Փաշինյանից նեղացած, վերջնականապես որոշել է միայն դասախոսությամբ զբաղվել: Նա ԵՊՀ եվրոպական եւ միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս է, 2011-ից դասավանդում է Հայաստանի Ամերիկյան համալսարանում:

Երեւանում մարտի 1-ին եւ 2-ին Շառլ Ազնավուրի անվան հրապարակում տեղի ունեցավ «Երեւանը կարդում է» գրական-երաժշտական միջոցառումը, որը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Երեւանի քաղաքապետարանի եւ հպարտ հարկատու քաղաքացու համար արժեցավ 54 մլն 991 հազար (գրեթե 55 մլն) դրամ, որը համարժեք է 140 հազար դոլարի: Քաղաքապետարանից միջոցառմանն ընդառաջ հայտնել էին, որ մարտի 1-ից հրապարակում կգործի գրքերի տոնավաճառ, իսկ մարտի 2-ին տոնավաճառին զուգահեռաբար կկայանա համերգ, որտեղ ելույթ կունենան «Լավ էլի», Սոնա Գյուլխասյան - Ռաֆայել Պետրոսյան, «Ջազ քնեքշն» եւ «Նեմրա» խմբերը: Միջոցառման ընթացքում կազմակերպվել էին պանելային քննարկումներ, նաեւ ընթերցանության անկյուն, որտեղ ժամանակակից եւ դասական հեղինակների ստեղծագործություններ էին կարդում հայտնի եւ տաղանդավոր դերասաններն ու արտիստները: ՀՀ Պետական գնումների կայքից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ կնքված պայմանագրի համաձայն՝ Ազնավուրի անվան հրապարակում տեղադրվել է 17 վրան, որոնք վարձակալությամբ են տվել գրքավաճառներին: Այս միջոցառման համար անգամ 28 հատ հատուկ պահարաններ են պատրաստվել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հայտնի Երգիչ Սպիտակցի Հայկոյի որդու քրեական գործը քննող քննիչը տեղյակ է պահել գործով մեղադրյալների կողմերին, որ առաջիկայում կանչելու է կոմիտե ու որոշման մասին հայտնի: Իսկ թե ինչ որոշման մասին է խոսքը, չի մանրամասնել: Ըստ էության, կամ հայտնելու է գործը դատարան ուղարկելու կամ երգչի որդու նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Հրաչյա Ղեւոնդյանի կալանավորումը մնացել է իրավապահ համակարգի կոկորդին: Գլխավոր դատախազությունը մինչեւ վերջ պայքարեց, հասավ մինչեւ Վճռաբեկ դատարան ու արդյունքում պարտվեց, քանի որ կալանքի հիմքեր չկային. ՀՀ դատարանները հրաժարվեցին երգչի որդուն կալանքի տանել: Ինչպես հայտնի է, 2024 թվականի մայիսի 23-ին Հրաչյա Ղեւոնդյանն ազատ էր արձակվել առաջին ատյանի դատարանի նիստերի դահլիճից. դատարանը, հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, մերժել էր քննիչի՝ նրան կալանավորելու միջնորդությունը: Բանն այն է, որ քննչական կոմիտեն հայտարարել էր, որ իշխանությունը բռնությամբ զավթելու փորձ է կանխել: Իշխանությունը յուրացնելու նախապատրաստության համար մեղադրանք է առաջադրվել հանրությանը «Սպիտակցի Հայկո» անունով հայտնի երգիչ Հայկ Ղեւոնդյանի որդուն. նրան կալանավորելու միջնորդություն էր ներկայացվել: Քննչական կոմիտեն տեսանյութ էր հրապարակել, որում մի տղամարդ դժգոհում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունից. «Ստեղ մի ելք կա՝ մտնենք կառավարությունը գրավենք, մտնենք Ազգային ժողով՝ գրավենք, մտնենք ոստիկանության շենք՝ գրավենք: Հիմա ես պատրաստ եմ մեռնեմ, ցավդ տանեմ, պիտի կրակեն՝ թող կրակեն, ավելի լավ ա մի 10-20 մարդ մեռնի, բայց, ընկեր, երկիր պահես»: Քննչականը պնդում էր, թե այս խոսքերի հեղինակը Հրաչյա Ղեւոնդյանն է:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ՆՐԱՆՑ ՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ ՉՈՒՆԻ», Մ. ԹԱՆԴԻԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Ազատության հրապարակում զրուցել է «Աղրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մանե Թանդիլյանի հետ: Նա 8 օր է հացադուլ է հայտարարել՝ հաջակցություն Բաքվում ապօրինաբար դատվող հայ ռազմաքաղաքական գերիների:

-Տիկին Թանդիլյան, Ձեր առողջական վիճակի մասին կխոսե՞ք: Այսօր 8-րդ օրն է, ինչ գտնվում եք հացադուլի մեջ: Ինչպե՞ս եք Ձեզ զգում:

-Նախորդ օրերին ստացա բժշկական օգնություն ցուցանիշներս բարելավվել են: Ճնշումս բավականին ցածր էր եւ ջրազրկվել էի: Ջուր ստացա, հիմա մի փոքր ավելի լավ եմ: Ամեն օրն իր ազդեցությունը թողնում է, իմ կազմվածքի հետ դժվարություններ կան, բայց չեմ դժգոհում:

-Այս ընթացքում Ձեզ քաղաքական, հասարակական գործիչներ, հոգեւորականներ այցելե՞լ են: Գո՞հ եք իրենց այցելություններից:

-Տարբեր մարդիկ են այցելում, այդ թվում նաեւ այլ շրջանակներից: Ամենայն հարգանքով եմ վերաբերվում բոլորին, բայց այս հացադուլը այցելությունների համար չէ: Սա խնդրանք է Ռուբեն Վարդանյանին՝ իր հացադուլը դադարեցնելու՝ հասկանալով, որ իր կյանքին վտանգ է սպառնում: Ես շատ շնորհակալ կլինեմ, եթե բոլոր քաղաքական, հասարակական, հանրային գործիչները նույն խնդրանքով հրապարակային դիմեն Ռուբեն Վարդանյանին, որպեսզի նա իմանա, որ բոլորն են մտահոգ իր առողջությամբ: Նա պետք է իմանա եւ զգա, որ հայ ժողովուրդը գնահատում է իրեն որպես բոլոր ժամանակների լավագույն հայորդիներից մեկը: Ես ուզում եմ մարդիկ հասկական, թե ինչ հայորդի է գտնվում Բաքվի բանտում, որն ամեն օր իր առողջությունն է զոհաբերում Բաքվի բանտի դատավարության գործընթացներում: Եվ, ցավոք սրտի, մեր անգործության հետեւանքով նա ստիպված է դիմել միջոցների եւ մեր խնդրանքը իրեն պետք է ցույց տա, որ մենք սպասում ենք իրեն Հայաստանում:

-Ինչո՞ւ պահանջ չի ուղղում իշխանություններին, որ որեւէ քայլ ձեռնարկեն: Տպավորություն է, որ Հայաստանի իշխանություններն ամբողջովին ձեռքերը լվացել են:

-Եթե հացադուլ անեի այս իշխանությունների հետ որեւէ բան խոսելու համար, թերեւս կասեի, կլինի՞ չվնասեք այն մարդկանց, որոնք գտնվում են Բաքվի բանտում: Այլ պահանջ նրանցից ունենալն ուղղակի միամտություն է: Ես ցավով եմ ասում, որովհետեւ մեր պետությունը վերջապես այսօրվա դրությամբ իրենք են ներկայացնում, ու նրանք մարդիկ են, ում հրապարակային խոսքերը վնասում են Բաքվի բանտում գտնվող մեր գերիներին: Դա ամոթ է, եւ ես ուղղակի նրանց ասելիք չունեմ: Եթե այդքան ո՛չ խելք ունեն, ո՛չ հասկացողություն, որ իրենց հրապարակային խոսքերը վնասում են, ինչ պատկերացնեմ, որ ինչ-որ տեղ իրենք ինչ-որ բան պետք է անեն: Մեր իշխանությունները համարձակություն ունեն ստելու, որ իրենք ջանք են գործադրում, որը չի երեւում: Երբ մենք հրապարակային տեսնում ենք այն տարրական ջանքերը, որոնք պետք է գործադրվեին, սա փաստ է եւ ապացույց, որ ոչինչ չի արվում: Եթե չասեմ, որ նպաստվում է՝ մարդիկ ավելի երկար պահվեն Բաքվի բանտերում: Հետեւաբար այս իշխանություններից մի պահանջ կարելի է ունենալ՝ հեռանալ վերջապես, իրենց այս անկարողությունն ու անմեղսունակությունը իրենց հետ հավաքելով, տանելով:

-Եթե իշխանությունները աշխատանք չեն տանում, ապա նախկինում ինչպե՞ս այդքան գերիներ վերադարձվեցին Հայաստան:

-Վստա՞հ եք, որ դա նրանց աշխատանքի շնորհիվ է: Նրանք կարող են այդպես միշտ պնդել, նրանք կարող են լավ բաները վերագրել իրենց նախկինների, եղանակի վրա: Նրանք այդ մարդիկ են: Նրանց մանիպուլյացիան եւ ստախոսությունը կարմիր գիծ չունի, սահման չունի: Ես վստահ չեմ որ իրենք ջանք են թափել ու այդ ջանքերի շնորհիվ են գերիներ վերադարձրել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻՑ ՔԻՉ ԲԱՆ Է ՄՆՈՒՄ

Աշխարհը փոխվել է, այն արդեն բազմաբեւեռ է եւ առնվազն նշմարվում են երեք գլոբալ ուժային կենտրոններ՝ Վաշինգտոնը, Մոսկվան եւ Պեկինը: Այս մասին նշել է Հայաստանի Հանրապետական կուսակցության խոսնակ, Ազգային Ժողովի նախկին փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

«Իհարկե, լուրջ դերակատարում ունեն նաեւ Լոնդոնը, Բրյուսելը, Դելին, դժբախտաբար Անկարան: Ուկրաինական պատերազմը, հակամարտությունը դեռեւս չի ավարտվել, եւ կա այն ավարտվելու առնվազն երկու սցենար: Սցենար համար մեկ. Զելենսկին իր եվրոպական հովանավորների հետ միասին ընդունում է ամերիկյան նոր վարչակարգի Թրամփի եւ Վենսի ուլտիմատում առաջարկությունները, որի արդյունքում Ուկրաինա ինքնիշխան պետությունից քիչ բան է մնում, երկրորդը նրանք չեն գալիս համաձայնության եւ Լոնդոն, Փարիզ այդ միավորված նոր միավորման արդյունքում Կիեւը փորձում է նոր ռազմական օժանդակություն ստանալ եւ մինչեւ վերջին ուկրաինացին պայքարել հանուն եվրոպական Արեւմուտքի շահերի»,-ասել է Շարմանազնովը:

Նա ընդգծել է, որ իր մոտ այնպիսի տպավորություն է, որ եվրոպական մայրաքաղաքներում ոչ այնքան Ուկրաինայի ճակատագրով են անհանգստացած, այլ անհանգստացած են, որ այդ Ուկրաինայի հնարավոր ազդեցության գոտիների բաժանումից իրենց ոչ մի բան չի հասնի:

«Եվ չեմ բացառում, որ Սթարմեր-Մակրոն զույգը Զելենսկու հետ փորձում է հանդիպել ամերիկյան վարչակարգին, որպեսզի նաեւ ցույց տա, որ դե լավ, դուք 350 միլիարդ եք ծախսել, մենք էլ 100 միլիարդից մի քիչ ավել ենք ծախսել, գոնե մի բան էլ մեզ հասնի:

Սա եւս մեկ անգամ հստակ ցույց է տալիս, որ Հայաստանում ապրող այն արեւմտամոլների կարծիքը, որ ահա-ահա Եվրոպան գալու է եւ մեզ փրկելու է ադրբեջանա-թուրքական սպառնալիքից, դրանք դատարկ խոսքեր էին եւ քաղաքական տգիտության շարքին էին դասվում: Որովհետեւ հավաքական Արեւմուտքը Ուկրաինային օգտագործեց հակառուսական ճակատ ստեղծելու համար, Ուկրաինայից ստացավ հակառուսաստան, բայց թե դրանից ինչ օգուտ ստացավ Ուկրաինան, մենք չենք տեսնում: Երբեմնի Եվրոպայի ամենամեծ երկիրը շուրջ 40-50%-ով բնակչությունը պակասել է, մի հատված զոհվել է ռազմաճակատում, շատ մի մեծ հատված էլ արտագաղթել է երկրից:

Բոլոր նրանք, որոնք հույս են կապում գլոբալացված Արեւմուտքի օգնության հետ, կարող եմ ասել՝ թող տեսնեն Ուկրաինայի եւ Զելենսկու այս խայտառակ վիճակը, Արեւմուտքի ցինիկ պահվածքը եւ տեսնեն Հայաստանի իրավիճակը»,- հայտարարել է ՀՅԿ խոսնակը:

ՃԱՆԱՊԱՐՀ ԵՆ ՓԱԿԵԼ

Երեկ, Երեւանի Վրացական 6, 4 եւ Նաիրի Զարյան 15, 15 Ա բազմաբնակարան շենքերի բնակիչները փակել էին Նաիրի Զարյան փողոցը: Նրանք պահանջում էին, որ քաղաքապետարանը չեղարկի որոշումը, որով իրենց 50-60 տարվա հնությամբ շենքերի արանքում 12-հարկանի նոր շենք է կառուցվում: Ակցիայի մասնակիցներից մեկը բարձրախոսով դիմելով վարորդներին, նշել է. «Հարգելի քաղաքացիներ, խնդրում ենք ըմբռնումով մոտենալ մեր բողոքին, մեր շենքերին վտանգ է սպառնում: Դուք հիմնավորում ենք, որ ձեր երեխաների հետեւից եք գնում, բայց երկու օր առաջ այստեղ երեխայի են վրաերթի ենթարկել: Խնդրում ենք մի փոքր դիմանալ»: Որոշակի լարվածություն առաջացավ վարորդների ու ակցիայի մասնակիցների միջեւ: Ակցիայի մասնակից երիտասարդներից մեկը ոտքով հարվածեց ղեկին նստած վարորդներից մեկին, ով ցանկանում էր շրջանցել փողոցը փակածներին:

Հիշեցնենք, որ 2 օր առաջ առավոտյան վրաերթ էր տեղի ունեցել Նաիրի Զարյան-Հրաչյա Քոչար խաչմերուկում. անչափահաս աղջիկը տեղափոխվել էր հիվանդանոց:

ԹՐԱՄՓԸ ՆԱՄԱԿ Է ԳՐԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ ցանկանում է Իրանի հետ բանակցություններ վարել միջուկային գործարքի շուրջ, եւ որ մարտի 6-ին նամակ է ուղարկել երկրի ղեկավարությանը՝ հույս հայտնելով, որ նրանք կհամաձայնեն երկխոսության: Այս մասին նա ասել է Fox Business Network-ին տված հարցազրույցում, որը հեռարձակվել է մարտի 7-ին: «Ես ասացի՝ հույս ունեմ, որ դուք կբանակցեք, որովհետեւ դա Իրանի համար շատ ավելի լավ կլինի», - ասել է ԱՄՆ նախագահը: «Կարծում եմ՝ նրանք ցանկանում են ստանալ այդ նամակը: Մյուս այլընտրանքն այն է, որ մենք պետք է ինչ-որ բան անենք, որովհետեւ չի կարելի թույլ տալ եւս մեկ միջուկային զենք», - հավելել է նա:

Նամակն ուղղված է եղել Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլա Ալի Խամենեիին:

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ԿՍՏԱՆԱՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը նախօրեին կարգադրություն է ստորագրել, ըստ որի կանանց միջազգային տոնի առթիվ Ազգային ժողովի կին պատգամավորներն ու կին աշխատողները կպարգեւատրվեն 70 հազար դրամի չափով: Կարգադրությամբ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դ. Առաքելյանին հանձնարարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել համապատասխան վճարումների կատարումը:

ԻՐԱՎԻՃԱԿ

2 ԱՄՍՈՒՄ՝ 13 ՄԻԼԻՈՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները 2025թ. փետրվարի 26-ի դրությամբ ստացել են 13 միլիոն 183.1 հազար դրամի պարգեւավճար: Հայտնի չէ, թե ինչ նվաճումների, աշխատանքային ձեռքբերումների համար են Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը եւ մարզպետարանի պաշտոնյաները ճոխ կերպով պարգեւատրվում շուրջ 13 միլիարդ դոլար պետական պարտք ունեցող Հայաստանի պետական բյուջեից: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին հարցրել ենք. «2021թ. ապրիլի 8-ից զբաղեցնում եք Տավուշի մարզպետի պաշտոնը: Որո՞նք են այն 3 մեծ ձեռքբերումները, հաջողությունները, որոնք դուք ունեցել եք անցած գրեթե 4 տարվա ընթացքում»: Մարզպետարանից պատասխանել են. «Մարզպետն ապահովում է մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրագործումը: Անցած 4 տարիների ընթացքում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել, բոլորն էլ կարեւոր ձեռքբերում են»:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԴԻՐՔԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ

2024 թվականին սահմանազատման անվան տակ նախկինում ադրբեջանաբնակ, 1990 թվականից լքված Բաղանիս-Այրում գյուղի տարածքները, այդտեղ գտնվող հայկական սահմանապահ դիրքերն Ադրբեջանին հանձնելուց հետո Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհը հայտնվել է հանձնված տարածքներում հայտնված ադրբեջանական դիրքերի թիրախում: Ցանկացած ժամանակ ադրբեջանական զինուժը կարող է կրակով խոչընդոտել միջպետական ավտոճանապարհով երթեւեկին: Օրինաչափ է, որ շատ «ֆուռեր», որոնք արտերկրից Հայաստան բեռներ են ներկրում կամ Հայաստանից արտահանում, գերադասում են Վրաստան հասնել Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն ավտոճանապարհով, ոչ թե վտանգավոր դարձած Իջեւան-Նոյեմբերյան-Բագրատաշեն ուղիով:

ԹԻՎԸ ՆՎԱԶՈՒՄ Է

Ծնելիության ցածր ցուցանիշների, շարունակվող արտագաղթի պատճառով տարեցտարի նվազում է Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների, այդ թվում՝ առաջին դասարանցիների թիվը: Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում ներկայումս սովորում է 1389 առաջին դասարանցի, բոլոր դպրոցներում առկա են առաջին դասարանցիներ: 2022-2023 ուսումնական տարում առաջին դասարանցիների թիվը եղել է 1467, 2023-2024 ուսումնական տարում՝ 1465: Երկու տարում մարզի դպրոցների առաջին դասարանցիների թիվը նվազել է 76-ով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԿԱՐՄԻՐ ՑՈՒՑԱԿ»

ԹՐԱՄՓԸ ՑԱՆԿ Է ԿԱԶՄՈՒՄ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմն ավարտում է աշխատանքն առանձին երկրների քաղաքացիների համար ԱՄՆ մեկնելու նոր արգելքի վրա: Այս մասին հաղորդել է New York Times-ը՝ վկայակոչելով իրազեկ աղբյուրների:

Ինչպես հայտնել են հրատարակության զրուցակիցները, ԱՄՆ իշխանությունները պատրաստվում են կազմել այն երկրների «կարմիր ցուցակը», որոնց քաղաքացիների մուտքն ԱՄՆ կարգելվի: Աղբյուրներից մեկը նշել է, որ առաջարկվող «կարմիր ցուցակը» ներկայում հիմնականում բաղկացած է այն երկրներից, որոնց քաղաքացիների մուտքն ԱՄՆ ավելի վաղ արգելված էր Թրամփի նախորդ վարչակազմի օրոք:

Հրապարակությունը պարզաբանում է, որ այդ ժամանակ նման երկրների թվում էին Կուբան, Իրանը, Լիբիան, Հյուսիսային Կորեան, Սոմալին, Սուդանը, Սիրիան, Վենեսուելան եւ Եմենը: Պաշտոնյաներից մեկի խոսքով՝ նախագծում նախապես առաջարկվում էր Աֆղանստանը ներառել երկրների այն խմբի մեջ, որոնց քաղաքացիներին կտրականապես կարգելվի մուտք գործել ԱՄՆ: Նշվում է, որ պլանավորվում է ստեղծել այն երկրների «նարնջագույն ցուցակ», որոնց քաղաքացիների մուտքն ԱՄՆ կսահմանափակվի, բայց ամբողջությամբ չի արգելվի:

Նման երկրներից դիմորդները պետք է անցնեն դեմ առ դեմ հարցազրույց:Երրորդ՝ «դեղին խմբում» ընդգրկված երկրներին 60 օր ժամանակ կտրվի հայտնաբերված որոշ թերություններ վերացնելու համար, այլապես նրանք կարմիր կամ նարնջագույն ցուցակում կընդգրկվեն, ասել են աղբյուրները: Առայժմ հայտնի չէ՝ ամերիկյան գործող այցագրեր ունեցող մարդիկ կհայտնվեն արդյոք արգելքի տակ, եւ արդյոք այդ այցագրերը կչեղարկվեն:

Անհասկանալի է նաեւ, թե արդյոք արգելքները կվերաբերեն «գրին քարտ» ունեցողներին, որոնք ԱՄՆ-ում մշտական բնակության թույլտվություն են ստացել:

Նշենք, որ Թրամփի վարչակազմը նախատեսում է դադարեցնել պատերազմից հետո տեղահանված մոտ 240 հազար ուկրաինացիների ժամանակավոր իրավական կարգավիճակը, նշվում է, որ նոր կարգավորումը պատրաստվում է կյանքի կոչվել ապրիլին, եւ այն մշակվել է նույնիսկ նախքան Թրամփի, փոխնախագահ Վենսի եւ Զելենսկու միջեւ եղած հանրային բախմանը: Ի թիվս այլնի, պաշտոնապես հայտարարվել է, որ Կուբայի, Հաիթիի, Վենեսուելայի եւ Նիկարագուայի 530 հազար քաղաքացիների, ինչպես նաեւ թալիբների ռեժիմից փախած 70 հազար աֆղանցիների իրավական կարգավիճակը չեղարկվել է: Ուկրաինայի իշխանությունները դեռ չեն մեկնաբանել այս ծրագրերը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՇԱՃ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Սիրիայում ռուս զինծառայողների անվտանգությունն պատշաճ մակարդակով ապահովված է, ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ մեկնաբանելով Սիրիայի նոր իշխանությունների գործողությունը նախկին նախագահ Բաշար ալ-Ասադի կողմնակիցների դեմ: «Մեր զինվորականների անհրաժեշտ անվտանգությունն ապահովված է պատշաճ մակարդակով»,- ասել է Պեսկովը, փոխանցում է «Ինտերֆաքսը»-ը: Նա այսպես է պատասխանել հարցին, թե արդյոք վտանգ չի սպառնում ռուսական կոնտինգենտի անվտանգությանը՝ կապված Սիրիայում իրավիճակի վատթարացման հետ:

ՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է

Հայաստանի բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով բնապահպանության եւ ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական եւ օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում անցած տարի արձանագրվել է ընդհանուր 2536 իրավախախտում, որը 2023 թվականի համեմատությամբ նվազել է 0,3 տոկոսով:

Այս մասին հայտնել է ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վրեժ Գալոյանը: Նրա խոսքով՝ վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 1645 վարչական վարույթ, որը 2023 թվականի համեմատ աճել է 21,7 տոկոսով: Հարուցված վարչական վարույթների արդյունքում 2024-ին վարչական տույժի են ենթարկվել 992 անձ, որոնց նկատմամբ կիրառվել է 1346 վարչական տույժ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճել է 20,6 տոկոսով: Դրանց արդյունքում նշանակված վարչական տուգանքի չափը կազմել է 205 միլիոն 590 հազար ՀՀ դրամ՝ 2023 թվականի համեմատ աճելով 51,4 տոկոսով, իսկ 2022 թվականի համեմատ՝ 107,3 տոկոսով:

ՎԱՐՉԱՊԵՏՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է

Իտալիայի վարչապետ Ջորջիա Մելոնին առաջարկել է ընդլայնել ՆԱՏՕ-ի պաշտպանությունը Ուկրաինայի նկատմամբ՝ առանց դաշինքին միանալու: Խոսքը ՆԱՏՕ-ի կանոնադրության հինգերորդ հոդվածի մասին է, ըստ որի դաշինքի մեկ երկրի վրա հարձակումը համարվում է հարձակում բոլորի եւ, հետեւաբար, հավաքական պաշտպանության վրա: «Դա նույնը չէ, ինչ ՆԱՏՕ-ին միանալը, բայց խոսքը վերաբերում է Ուկրաինային տարածելու անվտանգության նույն հովանոցը, որն ունեն ՆԱՏՕ-ի երկրները: Դա կապահովի կայուն, երկարաժամկետ եւ իրական անվտանգության երաշխիքներ՝ որը ավելի արդյունավետ է, քան որոշ առաջարկներ, որոնք ես հիմա տեսնում եմ», - ասել է Մելոնին ԵՄ պաշտպանության գագաթնաժողովի շրջանակներում, որը տեղի է ունեցել երեկ՝ մարտի 6-ին, Բրյուսելում: Մելոնին պարզաբանել է, որ առաջարկը քննարկվում է: «Դեռեւս կոնկրետ ժամկետներ չկան, բայց ես այս մտքի նկատմամբ զգալի հետաքրքրություն եմ տեսնում զրուցակիցների կողմից: Ավելի երկարաժամկետ լուծումներ են անհրաժեշտ, քան եվրոպական խաղաղապահ զորքեր ուղարկելը Ուկրաինա»,- ասել է Մելոնին:

ՎՍՏԱՀ Է

Մտավախություն կա, որ իշխանությունները կարող են դիմել տարբեր մեթոդների ընտրություններում, բայց նաեւ վստահ եմ, վստահ եմ, որ այս անգամ լինելու է հաղթանակ: Այս մասին նշել է Փարաքարի համայնքապետի թեկնածու Վոլոդյա Գրիգորյանը, որը գլխավորում է «Ապրելու երկիր» եւ «Հաղթանակ» կուսակցությունների միավորմամբ ձեւավորված «Միասնություն» դաշինքի ցուցակը: Հարցին՝ եթե բանը հասնի կոալիցիա կազմելուն, որ ուժերի հետ է դա հնարավոր եւ որոնց հետ հնարավոր չէ, նա պատասխանեց. «Նախ, ես բացառում եմ, որ 50 տոկոսից ավելի չհավաքենք: Իսկ եթե ստացվի այնպես, որ պետք է կոալիցիայի հարց լինի, վստահ եմ, որ ամենաշատ ձայները մենք ենք հավաքելու, եւ այն ուժերը, որոնք կուզեն իրենց ձայնը մեզ տալ, մենք պատրաստ ենք աշխատել իրենց հետ»:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԱՀԱՄԱՐՍՈՒՌ ԴԵՊՔԻՑ

ArmLur.am-ը գրել էր, որ օրեր առաջ Արմավիրի մարզում ամուսինը խանդի հողի վրա անմարդկային բայլեր է կատարել կնոջ նկատմամբ, ընդհուպ՝ հրկիզել նրան:

Արարատի մարզի բնակիչ 28-ամյա Ա. Ա.-ն, ներկայացրել է դեպքից որոշ մանրամասներ, մասնավորապես այն, որ դեպքը չի եղել խանդի հողի վրա, այլ որ իր ամուսնու հետ բռնկված բոլոր վեճերը միշտ ունեցել են նման վերջաբան, ուղղակի այս անգամ գործը հասել է ոստիկանություն, քանի որ ամուսինը հրկիզել է իրեն, սպառնացել է, որ երեխաներին կվերցնի իրենից, կվնասի իր հարազատներին եւ ոչ միայն:

«Լրատվական կայքերում դեպքի մասին տեղեկությունը տարածվում է այնպես, որ այդ ամենը խանդի հողի վրա է եղել: Շուրջ 11 տարվա ամուսիններ ենք ու սա առաջին դեպքը չի եղել: Նա միշտ էլ իր համար ստեղծում էր տարբեր պատճառաբանություններ՝ վեճ սկսելու համար ու սա էլ հերթականն էր: Ամեն անգամ ինձ ծեծում էր, դանակ հանում ու սպառնում: Դեկտեմբերի 15-ի առավոտյան արթնացանք ու սկսվեց վիճաբանություն, որը հետո ավելի թեժացավ եւ նա ինձ տարավ նկուղ: Ես այդ ընթացքում մտածում էի, որ տանում է այնտեղ հաշտվելու, զրուցելու համար, բայց փաստորեն դա այդպես չէր: Իջանք նկուղ, ինձ ստիպեց նստեմ աթոռին, կապեց, որից հետո սկսեց ծեծի ենթարկել, սողոցը մոտեցրեց պարանոցիս, սպառնաց, որ ինձ կմորթի, կվնասի իմ եղբորը, հարազատներիս, երեխաներիս կխլի: Հետո վերցրեց ներկով լի տարան լցրեց իմ վրա ու կրակայրիչով այրեց: Ամբողջ հագուստս բռնկվեց, վազեցի դուրս, սակայն ոչ մեկ չկար, որ օգներ: Այդպես ինձ տեղափոխեց հիվանդանոց եւ պահանջեց, որ ոչ մեկի չասեմ, որ այդ ամենի հեղինակը ինքն է, այլապես կրկին սպառնալիքներ հնչեցրեց:Ես հիվանդանոցում խաբեցի, թե իբր վառարանը վառելուց է եղել, չասեցի անգամ իմ ծնողներին, հարազատներին: Երբ արդեն դուրս գրվեցի հիվանդանոցից, որտեղ բազմաթիվ վիրահատություններ էի տարել, կրկին վախի մթնոլորտ ստեղծեց, սպառնաց, որ ես պետք է գնամ իր տուն: Արդեն մեկ օր անց նա նորից խմեց, ջարդեց դռների ապակիները, հայհոյեց ինձ եւ ես հաջորդ առավոտյան իմ ծնողներին զանգեցի ու ասեցի, իրականում ինչ է եղել ու որ գան իմ հետեւից: Ծնողներս էլ նախ գնացել էին ոստիկանություն, ապա նոր եկել իմ հետեւից: Այժմ նա կալանավորված է ու ես միչեւ վերջ գնալու եմ, որ արժանի պատիժ ստանա ու օրենքի առջեւ պատասխան տա ինձ եւ իմ երեխաներին պատճառված հոգեբանական ու ֆիզիկական մեծ ցավի համար»:

Հիշեցնենք, որ, օրեր առաջ ՀՀ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի մարզային վարչության ծառայողները բացահայտել էին զարհուրելի դեպք:

Փաստերի ճնշման տակ ամուսինը՝Ա. Հ.-ն, խոստովանել էր, որ ինքը խանդի հողի վրա իր 28-ամյա կնոջը իջեցրել է իրենց տան նկուղ, ծեծի ենթարկել, ձեռքերը կապել, դանակով եւ սողոցով սպառնացել, շինարարական ներկը եւ սպիրտը լցրել վրան, որից հետո հրկիզել՝ կնոջը պատճառելով մարմնի տարբեր հատվածներում մարմնական վնասվածքներ եւ այրվածքներ:

Դեպքի փաստով ոստիկանության Վաղարշապատի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել էին ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

Փաստաբան Կարեն Ղոնյանի խոսքով (ամուսինն իր պաշտպանյալն է). «Էջմիածնի գյուղերից մեկում վառված կնոջ վերաբերյալ նյութում նշված տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանում, Ա.Հ.-ն մեղքը չի ընդունել եւ հայտել է որ ինքը չի հրկիզել կնոջը: Ավելի ուշ ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացեց, որ, որ Ա.Ա.-ի հաղորդման հիման վրա Արմավիրի մարզային քննչական վարչությունում 2025 թվականի փետրվարի 26-ին նախաձեռնվել է քրեական վարույթ: 2024 թվականի դեկտեմբերի 13-ին Արմավիրի մարզի գյուղերից մեկում ամուսինը կնոջը ծեծի է ենթարկել, շինարարական ներկը եւ սպիրտը լցրել է վերջինիս վրա եւ կրակայրիչով դիտավորյալ հրկիզել՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Նախաքննության ընթացքում ձեռքբերված փաստական տվյալների հիման վրա Ա.Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (առողջությանը ծանր վնաս պատճառելը): Ա.Հ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Ք. Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԴԵՊՔ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունում եւ Քննչական կոմիտեի ՀԿԳ ՔԳՎ մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում ստացվել էր տեղեկություն, որ պատրաստվում են Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստան տեղափոխել խոշոր չափերի թմրամիջոցներ: Այս մասին հայտնել են Ներքին գործերի նախարարությունից: Տեղեկությունը ստուգելու նպատակով ձեռնարկվեցին լայնածավալ օպերատիվ միջոցառումներ ու քննչական գործողություններ, եւ արդյունքը չուշացավ: Փետրվարի 24-ին հայտնաբերվեց եւ նախաքննական մարմին ներկայացվեց շուրջ 30 կիլոգրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց: Թմրանյութն առգրավվեց: Սրանով կանխվեց շուրջ 450 միլիոն դրամի թմրամիջոցը մանր չափերով Հայաստանում իրացնելու փորձը: Ձեռնարկվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ եւ քննչական գործողություններ՝ ապօրինի թմրաշրջանառության շղթայում ներգրավված անձանց ինքնությունը պարզելու եւ նրանց հայտնաբերելու ուղղությամբ: Նախաձեռնված քրեական վարույթը շարունակվում է:

ԴԱՏԱՐԱՆԸ ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼ Է

Վերաքննիչ քրեական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արսեն Նիկողոսյանի, բավարարել է Ղարիբ Բաբայանի պաշտպանական կողմի բողոքը: Այս մասին հայտնել է փաստաբան Աբգար Պողոսյանը: Վերաքննիչ քրեական դատարանը՝նախագահությամբ Ա. Նիկողոսյանի, բավարարել է պաշտպանական կողմի բողոքը Ղարիբ Բաբայանին առնչվող վարույթով՝ արձանագրելով հիմնավոր կասկածի բացակայությունը: Այսպիսով, պարոն Բաբայանի նկատմամբ ընտրված սահմանափակումները կվերանան»,-գրել է նա: Հիշեցնենք, որ Ազգային անվտանգության ծառայությունը հայտարարություն էր տարածվել, որում ասվում էր, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ համացանցում տարածված եւ լայն արձագանք գտած տեսագրությունը հրապարակվել է «Ռազմավարական հետազոտությունների Անկախ Կենտրոն» հասարակական կազմակերպության ղեկավար Ղ. Բ.-ի կողմից՝ համանուն ֆեյսբուքյան օգտահաշվում, իսկ տեսագրությանը կից Ղ. Բ.-ն տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ հանդես է եկել անձի կամ անձանց խմբի նկատմամբ քաղաքական եւ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված՝ ատելություն եւ անհանդուրժողականություն հրահրելուն եւ/կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքով: Քննչական կոմիտեից էլ հայտնեցին, որ Ղարիբ Բաբայանը ձերբակալվել է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՊԱՀՎԱԾՔԸ

Քաղաքացիական պայմանագրի ղեկավարի եւ վերնախավի որոշ ներկայացուցիչների խոսքերը, թե հրապարակային քայլերի դեպքում գերիներն Ադրբեջանից չեն վերադառնա, ոչինչ չանելու արդարացումներ են: Այս մասին հայտնել է նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը. «Սա վտանգավոր պահվածք է. քաղաքացուն ցույց են տալիս, որ խնդիր ունենալու դեպքում պետությունը նրան չի պաշտպանելու: Երբ 2021 թվականի հրապարակեցինք Ադրբեջանում հայ գերիների խոշտանգումների վերաբերյալ մեր զեկույցը, ՔՊ վերնախավից որոշ անձինք այն անվանեցին «հնարած տեսարաններ»: Նման գործելաոճն առավել է արձակում ադրբեջանական իշխանության ձեռքերը, նսեմացնում է պատանդների եւ գերիների ազատ արձակման համար պայքարը:Այն պայմաններում, երբ ադրբեջանական իշխանությունն արգելափակում է դատահրավական ճանապարհները, միջազգային կառույցների աշխատանքը, պետությունը հատկապես պարտավոր է ակտիվ գործել, այդ թվում՝ հրապարակային դաշտում ու մեծացնել ճնշումը: Հրապարակային քայլերի բացակայությունը մեր օգտին չէ, չի կարելի անպաշտպան թողնել սեփական հայրենակիցներին, հատկապես նրանց, որոնք պայքար են տարել Հայրենիքի համար»:

ՀԱՅՀՈՅԵԼ ՈՒ ԾԵԾԵԼ ԵՆ

Երեւան-Գյումրի ավտոճանապարհի Հոռոմի խաչմերուկը շարունակում է մնալ ամենավտանգավոր հատվածներից մեկը Հանրապետությունում. Երեկ, նշված խաչմերուկում ճանապարհը չզիջելու պատճառով վարորդներն իրար ամենավերջին հայհոյանքներն են տվել, հարվածել միմյանց: Հիշեցնենք, որ մարտի 2-ին խոշոր ավտովթար-հրդեհ էր տեղի ունեցել Շիրակի մարզում: Ժամը 00:20-ի սահմաններում Գեղարքունիքի մարզի բնակիչ 37-ամյա Մելանյա Մ.-ն իր վարած «Hyundai Solaris» մակնիշի ավտոմեքենայով Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 107 կմ հատվածում՝ ժողովրդին հայտնի Հոռոմի խաչմերուկում, դուրս էր եկել երթեւեկելի գոտուց, բախվել ճանապարհին տեղադրված ժամանակավոր բետոնե արգելապատնեշներին եւ բռնկվել:

Վթարի հետեւանքով վարորդը բժշկական օգնություն ստանալու նպատակով տեղափոխվել էր Գյումրու բժշկական կենտրոն, որտեղ անհրաժեշտ բուժօգնություն ստանալուց հետո հրաժարվել էր մնալ հիվանդանոցում: Հրշեջ-փրկարարները մարել էին ավտոմեքենայում առաջացած կրակը, սակայն այն ամբողջությամբ վերածվել էր մոխրակույտի:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 6-ից 7-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 134 դեպք, որից 7-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ ԲԱՔՎԻՑ

Ռուբեն Վարդանյանը Բաքվի մեկուսարանից ընտանիքի միջոցով առաջիորդեր է փոխանցել՝ հեռախոսազրույցի ժամանակ խնդրելով ձայնագրել իրեն եւ հրապարակային դարձնել այն: Ռուբեն Վարդանյանի ուղերձը՝ փոխանցված ընտանիքի միջոցով

«Հարգելի հայրենակիցներ,

Այսօր մարտի 5-ն է: Ես ուզում են ձեզ երկու խոսք ասել որպես Ռուբեն Վարդանյան, այնպիսին, ինչպես ես կամ՝ ոգով հայ, ռուսերեն մտածող ու խոսող: Աշխարհի մարդ, երջանիկ իմ կնոջ հետ միասին, բոլորին սիրող, ինքնակրթվող եւ հավատով առ Աստված:

Առաջին հերթին, ցանկանում եմ բոլորիդ շնորհակալություն հայտնել՝ մտքերով, աղոթքներով, նամակներով ինձ աջակցելու, այստեղ կատարվողի նկատմամբ անտարբեր չլինելու համար: Ես դա զգում եմ, ու դա ինձ ուժ է տալիս: Միտքը նյութական է: Ես լավ վիճակում եմ, ամուր եմ, առողջությունս նորմալ է, ինքս ինձ հետ հաշտ եմ ու ոգով ուժեղ, ինչպես երբեք: Ուզում եմ ներողություն խնդրել իմ սիրելի կնոջից, իմ ընտանիքից, բոլոր հարազատներից ու մերձավորներից, որոնց իմ այս որոշումով ցավ ու հուզմունք եմ պատճառում: Բայց դուք գիտեք, որ մեզնից յուրաքանչյուրն իր ճանապարհն ունի, եւ ես ինձ համար այս ճանապարհն եմ ընտրել: Մեր ճակատագրերը կանխորոշված են Աստծո կողմից, իսկ ճանապարհները միշտ մենք ենք ընտրում: Եթե նույնիսկ հրաժարվում ենք մեր ընտրությունից, դա մեր փոխարեն միշտ անում է մեկ ուրիշը:

Ուզում եմ եւս մեկ անգամ ընդգծել, որ իմ այս որոշումը ոչ մի կերպ պայմանավորված չէ ինձնով , իմ վիճակով կամ մեկուսարանում իմ պայմաններով, ինչպես անցած անգամ, երբ 20 օր շարունակ, մինչեւ ապրիլի 24 -ը, գիշերը 12 -ը հացադուլի մեջ էի: Սա բողոք է ընդդեմ գործընթացի, ընդդեմ նրա, թե ինչպես է իրականացվում այս դատական պրոցեսը:

Ես գիտակցել եմ ինչի եմ գնում, պատրաստ եմ եղել եւ պատրաստ եմ ավելի վատ պայմանների: Ես զոհ չեմ, ինձ պետք չէ խղճալ, քանի որ սա գիտակցված որոշում է: Իմ պահանջները նույնն են: Եթե դատում եք՝ դատեք պրոֆեսիոնալ կերպով, բաց ու հրապարակային, Ադրբեջանի բոլոր օրենքների ու ընթացակարգերի համաձայն, մյուսների հետ միասին, միջազգային լրատվամիջոցների, դիտորդների ներկայությամբ, եթե այդքան վստահ եք ձեր արդարացիության մեջ: Իմ գործն արհեստականորեն մի՛ առանձնացրեք: Ինչու է իմ գործն առանձնացվում, երբ իմ բոլոր մեղադրանքները կառուցված են նրա վրա, որ ինչպես դուք եք կարծում, ես կազմակերպված հանցավոր խմբի անդամ եմ, որին անդամագրվել եմ [19]87 թվականից:

Մի՛ խախտեք ձեր սեփական օրենքներն ու ընթացակարգերը: Մի՛ կեղծեք փաստաթղթերը, մի՛ նենգափոխեք արձանագրությունները: Չէ որ դուք ամեն ինչ ունեք՝ իմ բոլոր գաջեթները, իմ բոլոր փաստաթղթերը: Դատը մի դարձեք ձեւական դատավարություն, իմիտացիա, շոու: Եթե դատում եք՝ դատեք ճիշտ:

Իմ բոլոր հայրենակիցներին, սիրելի ու հարազատ մարդկանց ուզում եմ ասել հետեւյալը՝դատում են ոչ թե ինձ ու մյուս 15 հոգուն, այլ բոլոր հայերին: Ու եթե դուք դա չեք հասկանում, ուրեմն դա մեծ ողբերգություն է, քանի որ սա ողջ պատմության, հակամարտության վերջը չէ, այլ ընդամենը հերթական փուլը՝ի ափսոսանք բոլոր կողմերի:

Ինձ մեղադրում են ամեն ինչում, ամեն ինչում, ինչ տեղի է ունեցել [19]87 թվականից ի վեր: Խնդիր չկա. ես պատրաստ եմ կրել ամենածանր պատիժը դրա համար, միայն թե դա օգներ խաղաղության ու հանգստության հաստատմանը: Բայց պատրանք է, թե ձեզ հետո բոլորը հանգիստ են թողնելու եւ դուք հանգիստ կարող եք անել ձեր գործն ու վայելել կյանքը՝չմտածելով այս խնդիրների մասին, որոնք առջեւում են: Երբ տեղափոխվում էի Արցախ, ես գիտեի ինչի եմ գնում: Ցանկացած մարդ իր կյանքում ամեն բան անում է միայն իր համար, հանուն իրեն, եւ Աստծո առաջ պատասխան է տալիս միայնակ՝ իր բոլոր մտքերի, խոսքերի, գործողությունների համար: Ես դրանում խորապես համոզված եմ: Եվ եթե նույնիսկ ինչ-որ մեկն իրեն զոհում է հանուն Հայրենիքի, ընտանիքի կամ սկզբունքների, դա միմիայն իր անձնական որոշումն է եւ իր պատասխանատվությունը: Այնպես որ, այս իմաստով ես ամեն ինչ գիտակցված եմ արել:

Չգիտեմ՝ ես կունենամ արդյոք հնարավորություն ձեզ հետ շփվելու, թե ոչ, ուստի ուզում եմ ներողություն խնդրել բոլոր նրանցից, ում երբեւէ նեղացրել եմ խոսքով, գործով կամ անուշադրությամբ: Ներող եղեք: Ես դա չեմ արել վատ մտքով, նախանձից, գոռոզություն կամ վրեժխնդրությունից դրդված: Ես չէի ուզենա որեւէ մեկին ցավ պատճառել:

Հատուկ ուզում եմ խոսել մի մարդու մասին, որին ցավ պատճառելու միտքն այստեղ ինձ համար ամենածանրն է: Խոսքը Ալվարդի մասին է: Եթե ես Ձեր ու Ձեր ամուսնու հետ ձեր մեքենայում չգտնվեի, նա հիմա ձեր կողքին կլիներ: Խնդրում եմ ինձ ներեք: Ինձ համար դա ամենածանր պատիժն է, որ իմ պատճառով եւս մեկ մարդ այստեղ տառապում է բոլորիս հետ միասին:

Նաեւ ուզում եմ առանձին ներողություն խնդրել բոլոր երեխաներից, որոնք զրկվեցին իրենց հայրենիքից, որ չկարողացա անել ամեն ինչ, ինչ կարող էի եւ պետք է անեի, որպեսզի դա տեղի չունենար: Ես արեցի այնքան, որքանիհամար կարծում էի բարոյական իրավունք ունեմ, քանի որ ձեզ հետ էի: Ես ուրախ եմ, որ ինձ հաջողվեց կանխել որոշ բաներ, որոնք իմ կարծիքով-...իմ կարծիքով մեզ որպես ազգ վերջնականապես կկոտրեին: Ինձ հաջողվեց դա կանգնեցնել եւ մի փոքր փոխել պատմության ընթացքը:

Ես երջանիկ էի լինել ձեզ հետ, Արցախի ժողովրդի հետ այդ ծանր օրերին, ողջ ընթացքում զգալ ձեր սերը, վստահությունը, ջերմությունն ու երախտագիտությանը: Ես հպարտանում եմ ձեզնով՝ ինձ հարազատ իսկական պարզ մարդկանցով, ու սիրում եմ բոլորին: Ես շատ երջանիկ մարդ եմ: Աստված ինձ հրաշալի ընտանիք, ընկերներ է տվել: Ես հսկայական թվով նախագծեր եմ իրականացրել իմ յուրահատուկ գործընկերների հետ: Ես շատ բան եմ տեսել աշխարհում: Բայց չնայած բոլոր դժվարություններին, շրջափակմանը, ապագայի անորոշությանը, ծանր պայմաններին, դրանք իմ կյանքի լավագույն օրերից էին. մենք միասին վերականգնում էինք Հակոբավանքը, հաց էինք կիսում եւ պարում մեր պարերը:

Երջանիկ եմ, որ հաջողվեց մեծաթիվ ընկերների ու գործընկերների հետ մի քանի տասնյակ նախագծեր իրականացնել Արցախում: Այդ թվում հատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել իմ մահմեդական ընկերոջը (չեմ ուզում անունը նշել՝ խնդիրներ չստեղծելու համար)՝ Շուշիի մզկիթը միասին վերականգնելու համար:

Հիշեք, որ չարին երբեք չի կարելի չարությամբ պատասխանել. նա դրանից մեծանում է եւ ավելի ու ավելի ուժեղ դառնում: Սումգայիթից հետո տեղի է ունենում Խոջալուն, եւ այդպես անվերջ: Այդ ճանապարհն ինձ համար միշտ անընդունելի է եղել, որովհետեւ այն ապագա չունի, դա միայն փակուղի է, որը, ցավոք, լավ ելք չի ունենում:

Ուզում եմ նաեւ շնորհակալություն հայտնել մեծ թվով ադրբեջանցիների, որոնց հետ այստեղ առնչվել եմ, մարդկային արժեքներին նրանց հավատարմության համար, անգամ այն դեպքում, երբ նրանք ինձ թշնամի են համարում եւ իրենց մոտ կուտակված դժգոհություն կա: Նրանք պահպանել են իրենց մարդկային կերպարը: Իսկ բոլոր նրանց, ովքեր իրենց այլ կերպ են պահել, ես անկեղծ խղճում եմ եւ ներում, ինչպես նաեւ այն հայերին, որոնք Հայաստանում են նույն կերպ վերաբերվում ինձ եւ ընտանիքիս:

Ես լավատես եմ եւ հավատում եմ, որ չնայած այս ամենին, հաղթահարելու ենք բոլոր մարտահրավերներն ու դժվարությունները, եւ նորից ապրելու ենք մեր հայրենիքում՝հարեւանների հետ խաղաղությամբ, հարգելով միմյանց: Հավատում եմ, որ կհաղթահարենք փոխադարձ թշնամանքն ու կուտակված ատելությունը, ինչպես դա ստացվել է որոշ ժողովուրդների մոտ:

Բայց եթե մենք ուզում ենք դա իսկապես անել, մեզ պետք է իրական երկարաժամկետ խաղաղություն՝ ոչ թե թղթի վրա ստորագրված, այլ կյանքի կոչված: Մենք պետք է հիշենք, որ մեզ ոչ ոք ոչնչով պարտական չէ, որ միայն ուժեղ մարդկանց հետ, էլիտա, արժանապատվություն, պատիվ ունեցող երկրի հետ կարող են իրական պայմանավորվածություններ ձեռք բերվել: Դա մեծ պատասխանատվություն է այն էլիտայի համար, որը էլիտա է համարվում ոչ թե նրա համար, որ շատ փող, կապեր, ուժ կամ անգամ՝ինտելեկտ ունի, այլ այն էլիտայի, որը հասկանում է, որ ում շատ է տրված, նրանից էլ ավելին է պահանջվում: Եվ այդ իրական էլիտայի մոտ անձնականը միշտ հանրության նկատմամբ պարտքից հետո է, ազգի ու երկրի ապագայի նկատմամբ պատասխանատվությունը միշտ գերակա է անձնական բոլոր շահերի ու ցանկությունների նկատմամբ: Եվ վերջինը՝ ի հիշատակ այս սարսափելի հակամարտության բոլոր զոհերի: Ես խորապես համոզված եմ, որ կան ավելի կարեւոր բաներ, քան մեկ մարդու կյանքը. դա քո մեջ բարու, լույսի, արժեքների, սրբությունների, հոգեւորիմքերի նկատմամբ հավատի պահպանման անհրաժեշտությունն է, որը մարդուն տարբերում է ռոբոտից: Քանի որ առանց դրա աշխարհը կխարխափի քաոսում կամ կկործանվի ջրհեղեղներից կամ ուրիշ աղետներից: Չի կարելի դառնալ ոսկե հորթի ստրուկը: Այդ ամենն արդեն եղել է մարդկության պատմության մեջ: Եկեք թույլ չտանք դրա կրկնությունը եւ դրա համար գործադրենք բոլոր ջանքերը, քանի որ արժեքների նկատմամբ հավատը մեր ապագայի հիմքն է: Ուստի հանուն այս հիմնարար արժեքների, հիմնասյուների եւ պատգամների պահպանման, որոնք ինձ համար կարեւորագույն նշանակություն ունեն, ես պատրաստ եմ ինքս ինձ հետ հաշտ գնալ մինչեւ վերջ ու միանգամայն երջանիկ լինել: Քանի որ երջանկությունն սկսվում եւ ավարտվում է քո մեջ, երբ դու ինքդ քեզ հետ ներդաշնակ ես:

Ես ուրախ եմ, որ կարող եմ ծառայել իմ ժողովրդին եւ այն սկզբունքներին, որոնք ես համարում եմ կարեւոր ողջ մարդկության, ոչ թե միայն մեր ժողովրդի համար: Եվ վերջինը. Ես այստեղ հասկացա, որ երբեք չի կարելի տրվել հուսալքությանը, անտարբերությանը, եւ հասկացա, թե ինչու է դա յոթը մեղքերից ամենասարսափելին: Մի ժամանակ կարծում էի ավելի վատ է նախանձը կամ գոռոզությունը: Մինչդեռ հուսալքությունը, վիատությունը նշանակում է, որ քո մեջ մարել է Աստծո կայծը, որ դու դադարել ես հավատալ, որ դու պարզապես ձեռքերդ բարձրացրել ու հանձնվել ես:Կոչեմ անում՝ երբեք դա չանեք: Կուզենայի, որ մենք երբեք չհիասթափվեինք եւ չտրվեինք հուսալքությանը: Խնդրում եմ: Դա մեր ապագայի հիմքն է, այդ իսկ պատճառով ես գնահատում եմ այն շանսը, որ ինձ տրվել է: Ես կանեմ ամեն ինչ, ինչ կարող եմ եւ կշարունակեմ անել, ինչ կարող եմ:

Ես բոլորիդ սիրում եմ: Համոզված եմ, որ ամեն ինչ լավ է լինելու: Ես միշտ եղել եմ, կամ ու լինելու եմ ձեզ հետ: Ես մարդ եմ, որն ուզում է ապրել, սիրել եւ շարունակել իր գործունեությունը: Բայց ես կարծում եմ, որ այն, ինչ անում եմ, ճիշտ է, քանի որ դա միակ ճանապարհն է դուրս բերելու ձեզ այն անտարբերությունից, որում գտնվում եք:

{Շարունակում է հայերեն }Լյոխ լավա լինելու:

Վստահ եմ, որ չնայած բոլոր դժվարություններին, որոնք կանգնած են մեր առջեւ, մենք կհաղթահարենք դրանք: Ես ձեզ հետ եմ որպես Ռուբեն Վարդանյան, Կառլենի տղան, Համո Վարդանյանի թոռը եւ իմ ողջ ժառանգությամբ՝ծնողների, նաեւ արցախցի տատիկի ժառանգությամբ: Շնորհակալ եմ ձեզ , որ ինձ տվել եք հայ լինելու եւ իմ հայրենիքը սիրելու այս երջանկությունը»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԸ ԳՈՐԻՍԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ ՎԵՐԱԲԵՐԵՆԴԱՎՈՐԵԼ Է

«Ֆասթ» Բանկը վերաբերենդավորել է Գորիս քաղաքի Անկախության փողոց 11/1 հասցեում գտնվող մասնաճյուղը եւ իր հաճախորդներին այսուհետ կներկայանա մեծ, լուսավոր, ժամանակակից ոճով կահավորված եւ տեխնիկապես վերազինված սրահով: Ինչպես «Ֆասթ» Բանկի մյուս մասնաճյուղերը, «Գորիս» մասնաճյուղը եւս տրամադրում է որակյալ եւ արագ սպասարկում՝ ապահովելով բանկային նորարարական լուծումներ: «Ֆասթ» Բանկի «Գորիս» մասնաճյուղի կառավարիչ Վահագն Վարդանյանն ասել է. «Բանկի բոլոր հաճախորդները նորառոճ եւ ընդարձակ սրահի հարմարավետ միջավայրում կօգտվեն Բանկի ծառայություններից. կներդնեն ավանդներ, կկատարեն միջազգային փոխանցումներ, տարադրամի փոխարկումներ, վճարումներ եւ այլ գործարքներ, կօգտվեն Բանկի վարկատեսակներից»:

«Գորիս» մասնաճյուղն առաջարկում է բանկային ծառայությունների լայն շրջանակ՝ հարմարեցված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կարիքներին: Բանկի աշխատակիցները մասնագիտացված են եւ պատրաստ են տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն: «Ֆասթ» Բանկում գործում են արագ սպասարկման գոտիներ պարզ գործարքների համար, ինչպես նաեւ էլեկտրոնային հերթագրման համակարգ, որը նվազեցնում է սպասման ժամանակը: Բանկն առաջնորդվում է հաճախորդներին անհատական մոտեցում ցուցաբերելու սկզբունքով: Ի դեպ, «Ֆասթ» Բանկն այսուհետ հանդես է գալիս նոր պաշտոնական կայքէջով, որը թույլ է տալիս հաճախորդներին ավելի հեշտ եւ արագ փորձառություն ունենալ տեղեկատվություն փնտրելիս:

«Ֆասթ» Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը:

ՏՆՏԵՍՎԱԾԸ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ Է

Օրեր առաջ, արտակարգ դեպք է տեղի ունեցել Շիրակի մարզում: Ժամը 13:15-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Անիի բաժնում տեղեկություն է ստացվել, որ «Գլխի գագաթային հատվածի ջնջված, կտրված վերք» ախտորոշմամբ «Մարալիկ» առողջության կենտրոն է տեղափոխվել մի քաղաքացի: Ոստիկանները պարզել են, որ բուժօգնության տեղափոխվածը Շիրակի մարզի բնակիչ 75-ամյա Սարգիս Պ.-ն է, ով հայտնել է, որ վնասվածքը ստացել է նույն օրը ժամը 13:00-ի սահմաններում է Մարալիկի Ինդրա Պողոսյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի բակում տանիքի սառցե բեկորները պոկվելու եւ գլխին ընկնելու հետեւանքով: Սարգիս Պ.-ն աշխատում է թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում, որպես տնտեսվար:

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԿԱՅԱԿԱՆ ԿՍՏԱՆԱՆ ՊԱՐՔԵՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ

Նախօրեին, Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 385-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» որոշումը: Այս մասին տեղեկացրել են ներքին գործերի նախարարությունից: Որոշմամբ սահմանվում է, որ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայի պահանջներին համապատասխանող այլ պետություններում ստացած վարորդական վկայականների հիման վրա Հայաստանի Հանրապետության երկբաղադրիչ հանդիսացող բաղադրիչն կտրվի ազգային վարորդական վկայական՝ առանց որակավորման քննություններ հանձնելու (տեսական եւ գործնական): Ընդ որում, նոր վկայականը տրվելու է առանց մյուս վկայականը վերցնելու:

Այս ընթացակարգի շրջանակում՝

քաղաքացին պետք է ներկայացնի այլ պետություններում ստացած վարորդական վկայականների պատճենը, ցանկի 1-ին եւ 4-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում՝ անձը հաստատող փաստաթուղթ, պետական տուրքի վճարման անդորրագիր:

Կատարվում է ստուգում՝ քաղաքացու թմրաբանական կամ հոգեբուժական բժշկական հաստատություններում եւ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց ցանկում հաշվառված չլինելու, սույն կարգի 8-րդ կետով նախատեսված (բժշկական) այլ հիմքերի բացակայության, ինչպես նաեւ այլ պետություններում ստացած վարորդական վկայականի վավերականության վերաբերյալ:

Նշված ընթացակարգերն ավարտելուց հետո քաղաքացին լուսանկարվում է համակարգչային տեխնիկայի միջոցով, եւ մեկ աշխատանքային օրվա ընթացքում նրան տրամադրվում է ազգային վարորդական վկայական:

Այս բարեփոխումները միտված են հանրային անվտանգության ամրապնդմանը եւ անվտանգային մշակույթի զարգացմանը՝ ապահովելով վարորդական վկայականների տրամադրման առավել պարզեցված եւ արդյունավետ գործընթաց:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետությունում երկքաղաքացիություն ունեցող Վրաստանի քաղաքացիները, որոնք վրացական վարորդական իրավունք ունեն՝ տուգանվում են Հայաստանում: Խնդրին անդրադարձել է նաեւ ՀՀ Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը: Աժ պատգամավորը նշել էր, որ Հայաստանում երկքաղաքացիություն ունեցող, սակայն վրացական անձնագրով ու վարորդական վկայականով երթեւեկող ջավախահայերը զանգվածաբար տուգանվում են: Պատգամավորը գրել է, որ իրեն դիմել են բազմաթիվ ջավախահայեր՝ բարձրաձայնելով իրավիճակը:

Ըստ ՀՀ Աժ պատգամավորի՝ շատ ջավախահայեր վերջին տարիներին երկքաղաքացիություն են ստացել, սակայն Հայաստան մուտք են գործում վրացական անձնագրով եւ վարորդական վկայականով: ՀՀ պարեկային ծառայությունը նման դեպքերում նրանց տուգանում է՝ գործող օրենսդրության պահանջներից ելնելով:

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ Team–ԻՑ

Team Telecom Armenia-ն իր պաշտոնական գործընկեր Honor ընկերության հետ համագործակցությամբ հանդես է գալիս բացառիկ առաջարկով: Գարնանային տոներին ընդառաջ հաճախորդները հնարավորություն ունեն ձեռք բերելու այս տարվա արտադրության նորագույն Honor X8c սմարթֆոնը եւ ստանալ բազմաֆունկցիոնալ Honor Choice Watch 2i սմարթ ժամացույց, հատուկ հեռախոսահամար, Tea2 Tok փաթեթ՝ 1 ամսով եւ 100 ԳԲ ինտերնետ, որը կարելի է օգտագործել 6 ամսվա ընթացքում:

Գարնանային եղանակի թրենդային Honor X8c սմարթֆոնն ունի էլեգանտ ու տարբերվող դիզայն, հզոր մարտկոց եւ տեսախցիկ ու վառ էկրան: Սմարթֆոնը հասանելի է երեք երանգով՝ սպիտակ, կանաչ ու սեւ: Հեռախոսը եւ կանխիկ, եւ ապառիկ հնարավոր է ձեռք բերել ինչպես Team-ի վաճառքի եւ սպասարկման կենտրոններից, այնպես էլ առցանց հարթակից՝ ամսական սկսած 1670 դրամից: Առաջարկը գործում է 01.03.25թ.-15.04.25թ. ներառյալ եւ հասանելի է միայն ֆիզիկական անձանց: Մանրամասներին կարող եք ծանոթանալ այստեղ: Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ԹՎԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

«2024 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում զոհվել (մահացել) է 40 զինծառայող, որից ծառայության հետ կապված հանգամանքներում՝ 27 զինծառայող.

-հակառակորդի կողմից՝ 4 ԵԿՄ անդամ,

-սպանության հետեւանքով՝ 5, որից՝ 1 ԵԿՄ անդամ,

-1 վարժական հավաքի մասնակից (հրդեհ),

-ինքնասպանություն եւ ինքնասպանության հասցնել՝ 7,

-ճանապարհատրանսպորտային պատահար՝ 4,

-մարտական մեքենաներ վարելու կանոնների խախտում՝ 1,

-ավիավթար՝ 2,

-հիվանդություն՝ 3, որից 1 ԵԿՄ անդամ,

-դժբախտ պատահար՝ 1,

ծառայության հետ չկապված հանգամանքներում՝ 13 զինծառայող.

-հիվանդություն՝ 3,

-ճանապարհատրանսպորտային պատահար՝ 7,

-ինքնասպանություն՝ 1,

-դժբախտ պատահար՝ 2

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՈՒՂԵՐՁԸ

Հռոմի պապ Ֆրանցիսկոսը, որը Հռոմի Gemelli հիվանդանոցում բուժում է ստանում երկկողմանի թոքաբորբի դեմ, առաջին անգամ աուդիոուղերձով դիմել է հավատացյալներին: Այս մասին հայտնում է Vatican News-ը: «Ամբողջ սրտով շնորհակալություն եմ հայտնում Սուրբ Պետրոսի հրապարակից՝ իմ առողջության համար կատարած աղոթքների համար: Ես, գտնվելով այստեղ, ձեզ հետ եմ: Թող Աստված օրհնի ձեզ, եւ Սուրբ Աստվածածինը պահպանի ձեզ: Շնորհակալություն», - ասել է պապը: Ուղերձը հեռարձակվել է Սուրբ Պետրոսի հրապարակում՝ առավոտյան աղոթքի ժամանակ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳԻՐՔԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

ԱՆՑՅԱԼԻ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնությունում եւ գավաթի խաղարկությունում «Արարատ-73»-ի փառավոր ելույթներին եւ դատական հաղթանակներին նվիրված գրքերի շարքը համալրվեց եւս մեկով:



«Արարատ-73»-ը «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթի տարեգրության մեջ» վերտառությամբ այս գիրքը հարգանքի ինքնատիպ տուրք է պատմություն կերտած անզուգական վարպետներին, նրանց ելույթները լուսաբանած մարդկանց եւ, իհարկե, լեգենդար «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթին՝ խորհրդային տարիներին Հայաստանի միակ մարզական պարբերականին, որը կրպակներում հայտնվելուց րոպեներ անց այլեւս անհասանելի էր դառնում մի փոքր ուշացմամբ վաճառակետին մոտեցած շատ մարզասերների համար:

Այն տարիներին Հայաստանում հիրավի ֆուտբոլային մթնոլորտ էր ու, թվում էր, ֆուտբոլով է ներծծված ամեն ինչ: Վիճակագիրները նույնիսկ պարզել էին, որ «Արարատ»-ի հաղթանակներից հետո հանրապետությունում աճում էր աշխատանքի արդյունավետությունը, քանի որ մարդիկ ավելի եռանդուն եւ ոգեւորված էին կպնում գործի: Այդ առումով պետք է նշել, որ Էմանուել Մարգարյանին հաջողվել է գրքի էջերից հնարավորինս փոխանցել «Արարատ»-ի ելույթների էներգետիկան:

Գրքի շնորհանդեսին, որը մարտի 7-ին տեղի ունեցավ, մասնակցեցին հայկական ֆուտբոլի երբեմնի դրոշակակրի հաղթանակների անմիջական կերտողներ Սերգեյ Բոնդարենկոն, Սերգեյ Պողոսյանը եւ Նորայր Մեսրոպյանը, նրանց ելույթները լուսաբանած մեկնաբաններ Սուրեն Բաղդասարյանը, Արսեն Բաբայանը, լուսանկարներով սերունդներին փոխանցած Ֆելիքս Առուստամյանը հայկական սպորտի եւ ֆուտբոլի այլ նվիրյալներ:

Գրքի հեղինակ Էմանուել Մարգարյանը տողերիս հեղինակին պատմեց, որ «Արարատ-73»-ի ելույթներին գրքի ձեւաչափով անդրադառնալու ցանկություն վաղուց ուներ, բայց գաղափարն ավելի հստակ ուրվագծվեց Ֆելիքս Առուստամյանի հետ մի զրույցից հետո:

Այս գիրքն առանձնանում է նրանով, որ արժեւորվում է նաեւ 1973-ին «Արարատ»-ի ելույթները «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթում լուսաբանած մարդկանց աշխատանքը: Պարզվում է, որ այդ տարի արարատցիների ելույթները թերթի էջերում լուսաբանել են 14 հեղինակներ, ընդ որում՝ ոչ միայն լրագրողներ: Նրանք են ճանաչված ֆուտբոլիստ եւ մարզիչ Ալբերտ Աբրահամյանը, Երեւանի «Դինամո»-ի, այնուհետեւ «Սպարտակ»-ի խաղացող Հովսեփ Ասատրյանը, անզուգական վարպետ Սարգիս Հովիվյանը, «Արարատ»-ում եւ «Շիրակ»-ում ինքնատիպ ելույթներով հայտնի Անատոլի Ջիրոյանը, համամիութենական կարգի ֆուտբոլային մրցավար Մաթեւոս Մկրտչյանը, տեսաբան Հրանտ Նարինջյանը, «Հայաստանի Ֆիզկուլտուրնիկ»-ի փոխմբագիր Միսակ Նազարյանը, բաժնի վարիչ Արսեն Բաբայանը, թերթին թղթակցած Վան Բայբուրթյանը (հետագայում Վրաստանի խորհրդարանի անդամ), «Սովետսկի սպորտ» թերթի Հայաստանում երկարամյա սեփական թղթակից Սերգեյ Հարությունյանը, «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի Հայաստանում երկարամյա սեփական թղթակից Արսեն Կակոսյանը, հեռուստամեկնաբան Սուրեն Բաղդասարյանը, լուսանկարիչներ Ռաֆիկ Հեքեքյանը եւ Ֆելիքս Առուստամյանը: «Արարատ-73»-ը «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթի տարեգրության մեջ» գիրքն հասանելի է նաեւ գրադարաններում:

««Արարատ-73»-ը մեր ազգի պարծանքն է, ոգեշնչման փոքրաթիվ առիթներից մեկը: Ցավոք, 2023-ին Հայաստանում աննկատ մնաց արարատցիների պատմական հաջողության 50-ամյակը: Հոբելյանի առիթով այդ տարի թոռնիկիս՝ Դավիթիս մեծ աջակցությամբ հրատարակեցի հուշերս ամփոփած գիրք: Ոչ պետությունը, ոչ էլ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան որեւէ կերպ չանդրադարձան այդ փառավոր տարեդարձին: Մինչդեռ, ավելի քան կես դար առաջ արարատցիների կերտած նվաճումն առ այսօր անգերազանցելի է մնում հայկական ֆուտբոլի համար: Գտնում եմ, որ ամեն առիթով պետք է մեծարենք «ոսկե» սերնդի մեր ֆուտբոլիստներին, որոնցից կեսից ավելին այլեւս մեզ հետ չէ: Պետք է սովորենք գնահատել մեր բոլոր մեծերին»,- ասաց նա:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ Է ԽՆԴՐՈՒՄ

«Մանչեսթեր Սիթին» հնարավոր փոխարինող է փնտրում թիմի հիմնական դարպասապահ Էդերսոնին: Էդերսոնի պայմանագիրը «Մանչեսթեր Սիթիի» հետ նախատեսված է մինչեւ հաջորդ տարվա կեսերը: Լրագրող Գրեհեմ Բեյլի խոսքերով, «Քաղաքաբնակները» հետաքրքրված են չորս թեկնածուներով: Այդ թեկնածուներն են՝ Ջիոն Սուզուկին (22 տարեկան, Պարմա), Լյուկ Շեւալյեն (23, Լիլ), Անատոլի Տրուբինը (23, «Բենֆիկա)» եւ Ժոան Գարսիան (23, Էսպանյոլ):

ԲԱՆԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Մյունխենի «Բավարիան» բանավոր համաձայնության է եկել թիմի կիսապաշտպան Ջոշուա Կիմիխի հետ նոր պայմանագրի շուրջ, հայտնում է հայտնի ինսայդեր Ֆլորիան Պլետենբերգը X սոցիալական ցանցում: Աղբյուրի տեղեկություններով՝ համաձայնագիրը ուժի մեջ կլինի մինչեւ 2029 թվականը: Նշվում է, որ Կիմիխը դիտարկում էր ՊՍԺ տեղափոխվելու տարբերակը, սակայն գերմանացի ֆուտբոլիստի հիմնական ուշադրությունը մյունխենցիների հետ նոր պայմանագրի վրա է: Սպասվում է, որ Ջոշուան շուտով կստորագրի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Գերմանական Բունդեսլիգայի ընթացիկ մրցաշրջանում 30-ամյա Կիմիխը անցկացրել է 23 հանդիպում, որոնցում դարձել է մեկ գոլի եւ 6 գոլային փոխանցման հեղինակ: Կիսապաշտպանը Չեմպիոնների լիգայում ունի նաեւ 11 խաղ եւ 5 գոլային փոխանցում:

ՄՆԱՑԵԼ Է ԱՌԱՆՑ ԱԿՈՒՄԲԻ

Չավին առանց ակումբի է մնացել այն բանից հետո, երբ անցած մրցաշրջանի ավարտին լքեց «Բարսելոնայի» գլխավոր մարզչի պաշտոնը: Ինչպես հայտնում է El Nacional-ը, Չավիի «Մանչեսթեր Յունայթեդը» գլխավորելու հավանականությունը գնալով ավելի հավանական է դառնում: Աղբյուրի համաձայն՝ «Մանչեսթեր Յունայթեդն» արդեն մտածում է Ռուբեն Ամորիմի հետ բաժանվելու մասին, չնայած որ նա թիմը գլխավորեց միայն նոյեմբերին: Նշվում է, որ Չավին դեմ չէր լինի աշխատանքի անցնել «Օլդ Թրաֆորդում», բայց պայմանով, որ կազմը վերակառուցվի:

ԶԱՐՄԱՑԱԾ Է

Մոսկվայի ԲԿՄԱ-ի բոսնիացի կիսապաշտպան Միրալեմ Պյանիչը Championat.com-ին տված հարցազրույցում կիսվել է ռուս խաղացողների մտածելակերպի մասին իր կարծիքով: Այն հարցին, թե ի՞նչն է նրան զարմացրել թիմում, նա պատասխանել է. «Բոլորը տեխնիկապես շատ լավ են հագեցված: Բոլոր ֆուտբոլիստներն էլ աշխատասեր են եւ մարզումների ժամանակ տալիս են ամեն ինչ: Ինձ դուր եկավ ռուսական մտածելակերպը, ես զարմացա, թե ինչպես էին ֆուտբոլիստները մարզումների ժամանակ աշխատում: Ես չեմ տեսել, որ Իսպանիայում եւ Իտալիայում ֆուտբոլիստներն այնպես մարզվեն եւ աշխատեն, որքան այստեղ: ԲԿՄԱ-ի ֆուտբոլիստներին մեծ ապագա է սպասվում. նրանք ուժեղ են եւ ֆիզիկապես զարգացած»:

ԲԱՑԱՌԻԿ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ Է ՇՈՒՐԻՇԿԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Դարեր շարունակ շատերի համար հույսի, բժշկվելու եւ իղձերի կատարման յուրօրինակ նմուշ դարձած Շուրիշկանի ավետարանն այսօր Մատենադարանի բացառիկ գանձերից մեկն է:

Մատենադարանի Ձեռագրատան ավագ ֆոնդապահ Գայանե Խաչատրյանը նշել է, որ Շուրիշկանի ավետարանը մեծ համբավ է վայելում եւ հայտնի է որպես խնդրակատար-ախտահալած ավետարան: Շուրիշկանի ձեռագիր Ավետարանը գրվել եւ նկարազարդվել է 1498 թվականին Վասպուրական նահանգի Քաջբերունիք գավառի Ասպիսնակ գյուղում. այն գրել եւ նկարազարդել է Բարսեղ քահանան: Ավետարանը, որը գրվել է ավելի քան 520 տարի առաջ, շուրջ երեքուկես դար պահպանվել է Պարսկաստանի Փերիա գավառի Շուրիշկան գյուղում: «Ավետարանը բաղկացած է 322 թերթերից, գրված է գեղեցիկ բոլորգրով, այն պատկերազարդ է, պահպանվել են ավետարանիչների երեք մանրանկարները, կիսախորան անվանաթերթերը եւ զարդագրությունները: Մեծ պատմական արժեք է ներկայացնում Ավետարանի հեղինակի բավականին ընդարձակ հիշատակարանը, որը տալիս է տեղեկություն ավետարանի ստեղծման բարդ եւ ծանր ժամանակաշրջանի եւ միջավայրի մասին»,- ասել է ավագ ֆոնդապահը:

Ըստ դարերից մեզ հասած պատմությունների՝ ժողովուրդը վստահ է եղել, որ Ավետարանի սուրբ զորությունն է իրենց օգնել դժվարությունները հաղթահարելու հարցում: Մասնագետի խոսքով՝ Ավետարանի համբավը տարածված է եղել ոչ միայն հայ ազգաբնակչության շրջանում, այլեւ օտարազգիների: Շատերը զուգահեռներ են տանում հայ ժողովրդի եւ Ավետարանի ճակատագրերի միջեւ. այն, գրված լինելով Վասպուրականում, հայտնվել է Պարսկաստանում եւ ի վերջո վերադարձել Հայաստան:

Գայանե Խաչատրյանն ընդգծել է՝ հաշվի առնելով Ավետարանի պահանջված լինելը, 2002 թվականից մինչ օրս ամեն տարի Շուրիշկանի Ավետարանը մեկ օրով դուրս է բերվել եւ տարվել Աշտարակի Մուղնի գյուղի Սուրբ Գեւորգ եկեղեցի, բայց այս տարի Մատենադարանի բացառիկ ցուցադրության շնորհիվ Ավետարանի հանդեպ մեծ հավատ ու սեր ունեցող քաղաքացիները, մարտի 10-ից սկսած, մեկ ամիս հնարավորություն ունեն այցելելու եւ տեսնելու այն:

● Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում մարտի 7-ին, ապրիլի 13-ին տեղի կունենա «Ուշ լինի, նուշ լինի» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որ փաստաթղթերի վրա է դրվում ապոստիլ, ինչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել ապոստիլ դնելու համար եւ ինչ ժամկետում է կատարվում ապոստիլով վավերացումը, որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Իսկուհի Հայրապետյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտում ենք, որ ապոստիլով հաստատվում է փաստաթուղթը ստորագրած անձի պաշտոնի, ստորագրության, ինչպես նաեւ փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961 թվականի Հաագայի կոնվենցիայի հիման վրա: Ապոստիլ դրվում է միայն այն փաստաթղթերի վրա, որոնք ուղարկվում են վերը նշված կոնվենցիայի անդամ երկրներ: Ապոստիլ դրվում է հետեւյալ պաշտոնական փաստաթղթերի վրա՝ նոտարի կողմից վավերացված կամ հաստատված փաստաթղթերի կամ պատճենների, նոտարի կողմից տրված վկայագրերի, նոտարի կողմից վավերացված թարգմանությունների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից տրված՝ ծննդյան, մահվան, ամուսնության վերաբերյալ փաստաթղթերի, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրված փաստաթղթերի, դատարանների կողմից տրված փաստաթղթերի իսկական օրինակների վրա: Նախարարության կողմից ապոստիլ կարող է դրվել նաեւ այլ մարմինների կողմից տրված փաստաթղթերի վրա, եթե դրանց վրա դրված ստորագրության իսկությունը վավերացված է նոտարական կարգով:

Ապոստիլ դնելու համար կարող է դիմել ոչ միայն փաստաթղթի հասցեատերը, այլեւ ցանկացած անձ: Ապոստիլ դնելու համար անձը նախարարություն է ներկայացնում՝ դիմում, ապոստիլով վավերացման ենթակա փաստաթղթի իսկական օրինակը կամ նոտարական կարգովվավերացված փաստաթուղթը, ապոստիլով վավերացման ենթակա փաստաթղթի լուսապատճենը կամ պատճենը, պետական տուրքի վճարման անդորրագիր՝ ապոստիլով վավերացման ենթակա յուրաքանչյուր փաստաթղթի համար առանձին-առանձին կամ բոլորի համար մեկ միասնական անդորրագրով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փաստաթղթի վրա ապոստիլը դրվում է դիմումը նախարարություն մուտք լինելու օրվանից հետո՝ հաջորդ աշխատանքային օրը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք, թե ով է համարվում գործազուրկ:

Գայանե Հարությունյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գործազուրկ է համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած աշխատանք փնտրող եւ զբաղվածություն համարվող գործունեության որեւէ տեսակով չզբաղված անձը, որն աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում, պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի եւ ստացել է գործազուրկի կարգավիճակ: Տարածքային կենտրոնն աշխատանք փնտրող անձին տալիս է գործազուրկի կարգավիճակ՝ որպես աշխատանք փնտրող հաշվառվելու համար անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամություն ունեցող աշխատանք փնտրող անձի հաշվառման համար, նշված փաստաթղթերից բացի, տարածքային կենտրոնը հաշվի է առնում նաեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշմանդամություն ունեցող անձին տրված վերականգնողական անհատական ծրագիրը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկար՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Գարնանամուտը լավ է անդրադարձել նույնիսկ կենդանիների վրա:

Ծաղիկներն ու զբոսանքի դուրս եկած կատուները, շատ ներդաշնակ են:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-9 - 12 -4 - 7
Կոտայքի լեռներ	-11 - 14 -5 - 7
Կոտայքի նախալեռներ	-6 - 10 -1 - 3
Գեղարքունիք	-10 - 13 -6 - 8
Լոռի	-10 - 15 -3 + 1
Տավուշ	-5 - 8 -2 + 2
Արագածոտնի լեռներ	-10 - 15 -6 - 10
Արագածոտնի նախալեռներ	-6 - 9 0 - 3

Արարատ	-4 - 7 0 + 2
Արմավիր	-6 - 9 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-11 - 14 -6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	-6 - 11 0 - 3
Սյունիքի հովիտներ	-5 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	-10 - 12 -2 - 5
ԼՂՀ	-10 - 12 -2 - 4
Երեւան	-2 - 5 -2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.3.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*